Բագուի թաղերը և փողոցները ցոյց տալու համար հետեւեալ ցուցակն եմ գնում այստեղ.

1. Հայոց փողոց, որ հայոց մեծ եկեղեցւոյ առաջին է։
2. Վարանցովսկի։
3. Ցիցեանովսկի՝ որ Ցիցեանովի արձանի առաջին է։
4. Ծովեզերքի փողոց։
5. Ռուսաց նոր եկեղեցւոյ փողոց։
6. Ճամախւոյ ճանապարհի փողոց։
7. Հայոց ուսումնարանի փողոց։
8. Մալականի այգւոյ փողոց։
9. Վակզալ տանող փողոց։
10. Գերեզմանատուն գնացող փողոց։
11. Բարեատինսկի փողոց։
12. Գուլիբագինսկի։
13. Գազամաթի։
14. Բայիլի։
15. Բիբիհէյբաթ։
16. Զամբարաքեանդ։

Բայց աւելի պարզ և բացայայտ լինելու համար արտագրում եմ ներկայ 1893 թուին Բագուի քահանայից ծխարաժանութեան կամ թաղարաժանութեան յ7ն ապրիլի գրած ու կնքած արձանագրութիւնը, որով իմացւում է նախ թէ քանի թաղ է քաղաքը և երկրորդ թէ քանի փողոցներ են և ինչ անուններով։ Եւ ահա այս է այն արձանագրութեան պատճէնը.

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

37ն ապրիլի 1883 ամի ի քաղաքն Բագու։ Քաղաքիս Եկեղեցեաց Հայ միաբան քահանայից բազմադիմի բանաւոր ու գրաւոր յօժարական ցա՛կութեան, Թեմիս Գերապատիւ Առաջնորդի բարեհաճ թոյլտուութեամբ և քաղաքիս Հայ Հասարակութեան ամենաստուար մեծամասնութեան փափագանաց համաձայն ստորագրեալ քահանայքս Բագուի ձեռնարկելով քաղաքիս Հայ Հասարակութիւնը ծխական համայքների վերածել ըստ կանոնաց Հայաստան.